«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

## Ընդունելության թեստ 6-րդ դասարանի համար
## Մայրենի

Անուն-ազգանուն_____ Ամսաթիվ_____

**1. Լրացնել տեքստի բաց թողած տառերը: [10]**

Շատ վաղուց՝ Մեծ ջրհեղեղից հետո, առա—ին ձյունը Արարատ լեռան վրա նստել է Հայկ նահապետի հոր՝ Թորգոմի ժամանակ: Դա եղել է մեզանից չորս հազար հինգ հարյուր տարի առա—:

Այդ ժամանակ հեթանոս հայերը Նոր տարին տոնում էին գարնանամուտին: Մի անգամ՝ Ամանորի նախ—րեին, արտասովոր ցրտեր իջան երկնամուխ Մասիսի կատարից և խուժեցին այգիներն ու դաշտերը: Թորգոմը արմատով պոկեց ծիրանենին և տարավ տուն: Նրա օրինակին հետևեցին մ—ուսները: Երբ հնչեց Նոր տարին ավետող ծնծղան, մարդի— սկսեցին ուրախ պարել կանաչ հյուրի շուրջը: Նրա ճյուղերից նվերներ ու զար—արանքներ կախեցին:

Հաջորդ տարվա Ամանորին չնայած ցրտեր չեղան, բայց մարդիկ այգիներից դար_յալ ծառեր տարան իրենց տները:

Այնուհետև հայկական բոլոր ընտանիքներում Ամանորի գալուստը նշանավորվում էր կանաչ ծառի կամ դալար ոստի ներկայությամբ:

Այդպես ծառը դրսից տուն մտավ և դար_ավ տոնածառ ու զվար_ություն պար_ևեց մարդկանց:

**2. Տեքստից դուրս գրել տրված բառերին իմաստով մոտ(հոմանիշ) բառերը: [10]**

ընծա ——————————————————

գագաթ ——————————————————

մատղաշ——————————————————

ցնծագին——————————————————

երկնասույզ——————————————————

**3. Գրել գտրված բառերի հականիշները: : [10]**

զվարթություն——————————————————
իջնել——————————————————
դրսից——————————————————
վերջին——————————————————
տանել ——————————————————

**4. Ո՞րն է քո սիրելի տոնը և ինչպե՞ս է այն նշվում քո ընտանիքում: Շարադրել 5-6 նախադասությամբ: [12]**

_____

_____

_____

_____

_____

_____

_____

**5. Շրջանակի մեջ առնել այն նախադասությունների տառահամարները, որոնցում բառերի սխալ գործածություն կա։ [6]**

**Ա.** Մեղուն նեկտար էր հավաքում անուշաբույր ծաղիկների ելևէջներից։
**Բ.** Աշնանը հաճախ եմ գնում ալոճ հավաքելու։
**Գ.** Երդիկը տան ներքնահարկում փորած խոր հորն է։
**Դ.** Կարապի պարանոցն անչափ նրբագեղ ու դյուրաթեք է։
**Ե.** Ես շատ գոհ էի մեր զբոսանքից, ուստի սկսեցի տրտնջալ։
**Զ.** Չկնորսն իր ուռկանը կրկին ծովը նետեց։

**6. Կապակցության իմաստն արտահայտել մեկ բառով։ [10]**

մեղուներ բուծող_____

լուր բերող_____

գինի վաճառող_____

փոքր լիճ _____

լույս տվող_____

**7. Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները, նշել, թե տրված բառերում ինչ հնչյունափոխություն է կատարվել։ [12]**

ըմպանակ_____

ծանրոց_____

ալրաղաց_____

հրավիրել_____

հոգյակ_____

կատվիկ_____

**8. Փակագծերում տրված բառերից ընդգծել ճիշտ տարբերակը։ [6]**
**Ա.** Սարի լանջին մի սառնորակ (խոխոջուն, խոխոջյուն) առվակ կար։
**Բ.** (Ասյա, Ասիա) Գրիգորյանը մեր թատերական խմբակի ղեկավարն է։
**Գ.** (Վիկտորյա, Վիկտորիա) ջրվեժի շառաչը լսելի է շատ հեռվից։
**Դ.** Բարոն Մյունհաուզենը հայտնվել էր առյուծի ու կոկորդիլոսի (մինչև, միջև)։
**Ե.** Մենք (հարթ, հարդ) տարածություն էինք փնտրում, որ ֆուտբոլ խաղանք։
**Զ.** Աշնանն անտառ էինք գնացել՝ (ալոճ, ալոջ) ու մասուր հավաքելու։

9. Տրված բառարմատներով կազմել 2-ական նոր բառ: [8]

ընկեր ——————————————————————————————————————-

երես ——————————————————————————————————————

օդ ——————————————————————————————————————

ծառ ——————————————————————————————————————

10. Վանդակի փոխարեն տեղադրիր բաղաձայն հնչյուններ՝ ստանալով երեքական նոր բառ:[6]

□ող——————————————————————————————————————

խա□ ——————————————————————————————————————

11. Տրված բառերի տառերի վերադասավորումով ստանալ նոր բառեր: [5]

դարս ——————————————————————————

կավիճ ——————————————————————————

շատակեր ——————————————————————

մշակ ——————————————————————

գավառ ——————————————————————

12.Նշել տրված բառերի տառերի և հնչյունների քանակը: [5]

ռիմակ ——————————————————————

սերկևիլ ——————————————————————

երազանք ——————————————————————

կտրտել ——————————————————————

ճանապարհ ——————————————————————